ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 1

ք. Երևան 05 հոկտեմբերի 2022թ

«ՄՅՈՒԶԻՔ ՀՈԼԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս տնօրեն Գ.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից «Առողջապահության նախարարությունը» (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի համաձայն Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պատվերի հիման վրա մատուցել սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ պաշտոնական ընթրիքի կազմակերպում (այսուհետ՝ «Ծառայություն»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների համար Պայմանագրով որոշված ամբողջ արժեքը (այսուհետ՝ «Ծառայության Արժեք»), որն իր մեջ ներառում է բոլոր այն ծախսերը, որոնք Կատարողը կարող է կրել Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու համար:

2.2 Ծառայության Արժեքը կազմում է 7,500,000.0 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.3 Ծառայության Արժեքը վճարվում է հանձնման-ընդունման արձանագրությունը՝ Հավելված 1-ը և ԱԿՏ-ը՝ Հավելված 2 երկկողմանի ստորագրվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4 Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով Պատվիրատուի կողմից վճարումների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման դեպքում, Կատարողն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունների մատուցումից և միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ չվերադարձնելով Պատվիրատուի կողմից մինչ այդ վճարված գումարները: Պայմանագրի լուծման վերաբերյալ Կատարողը տեղեկացնում է Պատվիրատուին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

2.5 Կատարողի կողմից կարող են նախատեսվել որոշ անվճար ծառայություններ Պատվիրատուի համար: Այդպիսի ծառայությունները կսահմանվեն Պայմանագրում:

2.6 Ծառայությունները մատուցելուց հետո Կատարողը դուրս է գրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այսուհետ՝ «Օրենսդրություն») սահմանված

Կատարող Պատվիրատու

հարկային հաշիվ կամ հաշվարկային փաստաթուղթ (այսուհետ՝ «Հաշվարկային Փաստաթուղթ»):
2.7 Հաշվարկային Փաստաթղթերի հետ կապված առարկություններ ունենալու դեպքում Պատվիրատուն պարտավոր է դուրս գրելու պահից 3 (երեք) օրվա ընթացքում գրավոր կերպով հայտնել Կատարողին, այլապես այն կհամարվի ընդունելի Պատվիրատուի համար:
2.8 Վճարումները պետք է կատարվեն բանկային փոխանցման միջոցով՝ Կատարողի հետևյալ բանկային հաշվեհամարին.
Բանկի անվանումը՝ « Արդշինբանկ» ՓԲԸ
Հաշվեհամարը՝ 2470076640520000

3. ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1 Արժեքը

3.1.1 Միջոցառման մասնակիցների ակնկալվող թիվը կազմում է 600 անձ:
3.1.2 Միջոցառման մեկ մասնակցի արժեքը սահմանել 12,500.0 (տասներկու հազար) ՀՀ դրամ:
3.1.3 Ծառայությունների մատուցման ընթացքում անկանխատեսելի կերպով ծագած Կատարողի ծախսերը՝ կապված սննդի, խմիչքի կազմակերպչական աշխատանքների ավելացման և/կամ լրացուցիչ ծառայությունների մատուցման հետ (ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ ճաշացանկին լրացումներ կատարելը, Կատարողի կողմից մատուցվող այլ ծառայությունները և այլն), ենթակա են փոխհատուցման:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1 Վերջնաժամկետից 1 օր հետո Ծառայություններից հրաժարվելու դեպքում Պատվիրատուի նկատմամբ կիրառվում է տույժ Ծառայության Արժեքի 50%-ի չափով:
4.2 Ծառայություններից հրաժարվելու, ինչպես նաև դրանց ծավալների նվազեցման արդյունքում Պատվիրատուի նկատմամբ կիրառվող տույժերը հաշվարկելիս ծառայությունների արժեքներում ներառվում են նաև դրանց համար հաշվեգրվող հարկային պարտավորությունները:
4.3 Ծառայություններից հրաժարվելու դեպքում Պատվիրատուին խոստացված անվճար ծառայությունները համարվում են չեղարկված:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ Ծառայությունների կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ծառայության Արժեքի 0.05 տոկոսի չափով:
5.2 Ծառայության Արժեքի վճարման ժամկետները խախտելու համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ծառայության Արժեքի 0.05 տոկոսի չափով:
5.3 Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտավորությունից:

Կատարող Պատվիրատու

5.4 Կատարողը պատասխանատվություն չի կրում իր վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Պատճառները, որոնք կարող են խոչընդոտել պարտավորությունների կատարմանը, ներառում են, սակայն սահմանափակված չեն աշխատանքային վեճերով, գործադուլերով, կառավարության կողմից սահմանափակումներով, սննդի, խմիչքների, կամ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ապրանքների, ինչպես նաև ճանապարհորդության կամ փոխադրումների վրա դրված արգելքներով կամ սահմանափակումներով:

5.5 Պատվիրատուն ընդունում է, որ Կատարողը չի ստանձնում որևէ պարտավորություն և չի կրում որևէ պատասխանատվություն Կատարողի անունից հայտարարագրված ապրանքների և անձնական օգտագործման գույքի համար:

5.6 Պատվիրատուն ամբողջական գույքային պատասխանատվություն է կրում Մասնակիցների և/կամ միջոցառման ժամանակ Պատվիրատուին կամ վերջինիս կողմից նշված երրորդ անձանց ծառայություններ մատուցող անձանց գործողությունների/անգործության և Կատարողին կամ ցանկացած երրորդ անձի պատճառված վնասի համար:

5.7 Պատվիրատուն ամբողջական գույքային պատասխանատվություն է կրում միջոցառման ընթացքում Կատարողի կամ վերջինիս հարակից տարածքներում գտնվող գույքին պատճառված նյութական վնասի համար: Ընդ որում, վնասի առկայության դեպքում, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պատճառված վնասի վերաբերյալ տեղեկատվություն: Պատվիրատուն պարտավոր է պատճառված վնասի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու պահից 3 (երեք) օրվա ընթացքում իրականացնել վնասի փոխհատուցում:

5.8 Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում մինչև միջոցառումը, դրա ընթացում կամ դրանից հետո Սրահում թողնված որևէ գույքի վնասման կամ կորստի համար:

5.9 Պատվիրատուի համար երրորդ անձանցից տեխնիկական կամ այլ սարքավորումներ ներգրավելու դեպքում, Կատարողը գործում է Պատվիրատուի անունից և վերջինիս հաշվին: Պատվիրատուն է պատասխանատվություն կրում այդպիսի սարքավորումների նկատմամբ հոգատար վերաբերմունքի և դրանց պատշաճ վերադարձն ապահովելու, ինչպես նաև Կատարողին ցանկացած երրորդ անձի նմանատիպ պահանջներից զերծ պահելու համար:

5.10 Որևէ հեռուստաընկերության համար տեսանկարահանում կամ հարցազրույց իրականացնելու մտադրության դեպքում, Պատվիրատուն պարտավոր է միջոցառումից առնվազն 3 (երեք) օր առաջ իրազեկել Կատարողին՝ անհրաժեշտ թույլտվություն ստանալու համար:

5.11 Կատարողը իրավունք չունի սույն Պայմանագրի շրջանակներում իրականացնել որևէ գործողություն, որը բացասական ազդեցություն կունենա Պատվիրատուի հեղինակության վրա:

5.12 Կատարողը պարտավորվում է չհրապարակել և/կամ չգովազդել Պատվիրատուի հետ համագործակցությունը, չօգտագործել Պատվիրատուի տարբերանշանն ու անվանումը իր հրապարակումներում և/կամ կայքերում առանց Պատվիրատուին նախապես տեղեկացնելու և թույլտվություն ստանալու:

Կատարող

Պատվիրատու

5.13 Կատարողը պարտավորվում է բարեխղճորեն և անձամբ կատարել սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Կատարողն իրավունք ունի սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել երրորդ անձանց ներգրավմամբ միայն Պատվիրատուի նախապես գրավոր համաձայնության դեպքում:
5.14 Կատարողը պարտավորվում է պահպանել Պատվիրատուի գործունեության կամ նրա գործընկերների և հաճախորդների վերաբերյալ մասնագիտական, առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության գաղտնիությունը, որը փոխանակվել է Կողմերի միջև կամ որևէ այլ կերպ հայտնի է դարձել Կատարողին՝ մինչև սույն Պայմանագրի կնքումը բանակցությունների ընթացքում և սույն Պայմանագրի կատարման ընթացքում: Կատարողը պարտավորվում է զերծ մնալ երրորդ անձանց այդպիսի տեղեկատվությունը տրամադրելուց կամ հասանելի դարձնելուց, ինչպես նաև ի շահ իրեն կամ երրորդ անձանց այն օգտագործելուց:
5.15 Կատարողը պարտավորվում է չխախտել գործող որևէ հակակոռուպցիոն օրենսդրության (այդ թվում՝ ՀՀ օրենսդրության) համապատասխան դրույթ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է սույն պայմանագրի հետ՝ ներառելով բանակցային գործընթացը: Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցնել կամ լուծել սույն պայմանագիրը, եթե Պատվիրատուին հայտնի է դարձել, որ Կատարողը թերացել է սույն կետի համաձայն ստանձնած որևէ պարտավորության կամ երաշխավորության մեջ, կամ խախտել է դրանք:

6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

6.1 Կատարողը չի երաշխավորում Կատարողի տարածքում, ներառյալ Սրահում, առանց հսկողության թողնված գույքի անվտանգությունը:

7. ՍՆՈՒՆԴ ԵՎ ԽՄԻՉՔ

7.1 Ոչ Պատվիրատուին, ոչ էլ միջոցառումների մասնակիցներին, չի թույլատրվում որևէ տեսակի սնունդ և/կամ խմիչք բերել առանց Կատարողի գրավոր համաձայնության:
7.2 Այդպիսի համաձայնություն տալու դեպքում, Կատարողն իրավունք ունի գանձել վճար նշված սննդի կամ խմիչքի համար: Ինչպես սնունդ, այնպես էլ որևէ խմիչք չի կարող դուրս հանվել Կատարողից (միջոցառման վայրից), ինչպես նաև ծառայություններ մատուցվել, խմիչք կամ սնունդ վաճառվել առանց Կատարողի գրավոր համաձայնության:

8. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

8.1 Կողմերն ազատվում են իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար օրենքով և Պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից՝ այնքանով, որքանով այդ խախտումները պայմանավորված են անհաղթահարելի ուժի ազդեցությամբ:
8.2 Այն Կողմը, ում համար պարզ է դառնում իր որևէ պարտավորության կատարման անհնարինությունը, անհապաղ՝ սակայն երկու աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում, այդ մասին տեղեկացնում է մյուս կողմին: Այդ տեղեկատվությունը պետք է

ներառի պարտավորությունների կատարումն անհնար դարձնող հանգամանքների բնույթի և հետևանքների մասին տվյալներ:
8.3 Կողմը անհապաղ՝ սակայն երկու աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում, մյուս կողմին գրավոր կերպով տրամադրում է տեղեկատվություն պարտավորության կատարման անհնարինություն առաջացնող հանգամանքների վերացման մասին:
8.4 Այն հանգամանքները, որոնք սույն գլխով սահմանված կարգով անհնարին են դարձնում պարտավորությունների կատարումը, պետք է հիմնավորվեն համապատասխան փաստաթղթերով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

9.1 Պայմանագրի ցանկացած փոփոխություն, լրացում կամ ուղղում չունի իրավաբանական ուժ, քանի դեռ դրանք չեն վավերացվել կամ այլ կերպ գրավոր հավանության արժանացել մյուս Կողմի կողմից:
9.2 Սույն Պայմանագիրը վավեր է միայն դրանում սահմանված պայմաններով և ժամկետներում:
9.3 Պատվիրատուի կողմից Պայմանագրի որևէ փոփոխության նախաձեռնության դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Ծառայության Արժեքը, ինչպես նաև Պայմանագրի պայմաններն ու դրույթները:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը, առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին:
10.2 Նախորդ կետում նշված կարգավորումը չի բացառում Կատարողի իրավունքը՝ լուծել Պայմանագիրը դրանում նախատեսված այլ հիմքերով և կարգով:
10.3 Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է վճարել մինչ այդ պահը Կատարողի կողմից կատարված ծախսերը և հատուցել Կատարողի կրած վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը):

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

11.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
11.2 Պայմանագիրը գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական և վերջնական կատարումը կամ դադարումը:

12. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

12.1 Պայմանագրի վերաբերյալ ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանակցություններ կամ խորհրդակցություններ իրականացնելը նախապայման, իսկ դրանց ընթացքը խոչընդոտ չի հանդիսանում դատարան դիմելու համար:
12.2 Պայմանագրից բխող բոլոր իրավահարաբերությունները կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ Օրենսդրությամբ:

Կատարող

Պատվիրատու

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

13.1 Պայմանագիրը կնքվում է հայերեն և անգլերեն տարբերակներով, որոնցում հակասություն առաջանալու դեպքում գործում է հայերեն տարբերակը:

13.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրամադրվում է մեկական օրինակ:

14. ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՄՅՈՒԶԻՔ ՀՈԼԼ» ՍՊԸ	«Առողջապահության նախարարություն»
ՀՎՀՀ՝ 00916706	ՀՎՀՀ՝ 02507071
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 51	Հասցե՝ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3
Բանկ «Արդշին Բանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 247450291445000	Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական համապատասխան հաշվեհամարից՝ _900011041218_
Հեռ. +374 77 78 74 65	Հեռ. 060 80 80 03
E-mail: arpine.muradyan@7visionshotels.com	E-mail: info@moh.am
Տնօրեն՝ Գ. Գասպարյան	Գլխավոր քարտուղար՝ Վ. Գրիգորյան
_____ Կ. Տ.	_____ Կ.Տ.

Հավելված 1
05 հոկտեմբերի 2022թ
կնքված թիվ 1 պայմանագրի

Կատարող

Պատվիրատու

Հավելված 1
05 հոկտեմբերի 2022թ
կնքված թիվ 1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական ընութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Կատարող

Պատվիրատու

Հավելված 2
05 հոկտեմբերի 2022թ
կնքված թիվ 1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

Կատարող Պատվիրատու